

Մայր Աթոռ ժամանեցին յունուարի 28 և 29-ին Սինոդի անդամներ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեանը, որ երկու ամսով արձակուրդ էր ստացել Թիֆլիզում բժշկուելու համար և Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, որ Վեհ. Հայրապետի կողմից ներկայացուցիչ էր նշանակուած հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկողաիշի յուզարկաւորութեան և թաղման ժամանակ:



ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Պատրիարքարանի կարգադրութիւններ:—Պատրիարքի հրաժարականը: Երուսաղէմի խնդիր: Կիլիկիոյ կաթողիկոսը յետ է վերցրել հրաժարականը: Զինուորացրութիւնը Թուրքիոյում. Դաւառական. Դպրոցական խնդիրներ. Կացութիւնը Հալէպի նահանգի մէջ:

Իււզանդիոնում կարգում ենք, որ դեկտեմբերի 4-ին Խառն ժողովը ղրաղուել է՝

1. Պատրիարքի հրաժարականի խնդրով, որովհետեւ ազգի և կառավարութեան միջև յարաբերական գործերը առանց պատրիարքի ներկայութեան փափագելի դրութեան մէջ չեն.

2. Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ Ժ. վարդապետին եպիսկոպոսութեան վկայական է տուել՝ զնահատելով նրա ծառայութիւնը առ ազգն ու եկեղեցին.

3. Արաբկիրի գաւառական ժողովի տեղեկագրի համեմատ Մեհրուժան վարդապետին հաստատել է Արաբկիրի առաջնորդ:

4. Զմիւռնիայի գաւառական ժողովը խնդրած լինելով մի առաջնորդական տեղապահ մինչև որ առաջնորդ կընտրուի, ժողովը առաջնորդական տեղապահ է կարգել Արսէն վարդապետ Վեհունուն.

5. Վաւերացրել է Երզնկայի գաւառական ընդհանուր ժողովի տեղեկագիրը.

6. Անպարտ է ճանաչել Խարբերդի նախկին առաջնորդ Խոսրով վարդապետ Պեհրիկեանին, որովհետեւ նրա դէմ յարուցուած ամբաստանութիւնը հաստատող ապացոյցներ, որ պահանջուած էին դեռ յուլիս 18-ին, 15-օրեայ ժամանակամիջոցում, չէին ստացուել:

Իււղանդիոնում կարգում ենք, որ Վեհափառ Հայրապետը յանձնարարած լինելով՝ վախճանուած եպիսկոպոսների պանագիէներն ու խաչերը ուղարկուին Մայր Աթոռ, Պատրիարքարանը ուղարկել է նորին ս. Օծութեանը հանգուցեալ Մեսրոպ արքեպիսկոպոս Սուքիասեանի, Սափրիչեան Տիմոթէոս և Վանքեան Արիստակէս եպիսկոպոսների պանագիէներն ու խաչերը:

Մեր պատրիարքի հրաժարման խնդիրը ցարդ առ կախ է մնացել. ազգային Վարչութեան ընտրած պատուիրակութեանը սրբազան պատրիարքը պատասխանում է, թէ քանի որ հրաժարականի պատճառները վերացուած չեն, ինքն չի կարող Պատրիարքարան վերադառնալ. իսկ պատճառն է Կիլիկիայի կոտորածի գլխաւոր յանցաւորի, և յատկապէս ոմն Ասաֆի չը պատժուելը: Թուրքաց նախարարութիւնը անտարբերութեամբ, բայց շատ քաղաքավարի ու անուշ խօսքերով ճանապարհ է դնում պատուիրակութիւնը ասելով՝ որ ինքն ուրախ կը լինի, եթէ պատրիարքը իւր աթոռը դառնայ և թէ հրաժարականի պատճառ չկայ: Այս դրութեամբ գործերը տարտամ վիճակի մէջ են մնում. պատուիրակութիւնը յոգնել է ապարդիւն դիմումներից, պատրիարքը իւր առանձնութեան մէջ է, թուրք նախարարութիւնը իւր քէֆին շահւողը միայն լրագրներն են, որ հրաժարականի խնդրից հետաքրքիր նորութիւններ յերկրելով զբաղեցնում են իրանց ընթերցողներին:

Դեկտեմբերի 11-ին, ուրբաթ օրը գումարած ազգ. ե-

բեսփֹֿխանական ժողովը զբաղուել է պատրիարքի հրաժարականի խնդրով: Այս ժողովը հետաքրքիր պէտք է լինէր նրանով, որ քաղ. ժողովը պէտք է ղեկուցանէր պատրիարքի հրաժարականի առիթով բանակցութիւնների հետեանքը, բայց չէ ղեկուցել, որովհետեւ ժողովականները օրինական թիւ չէին կազմում որոշում կայացնելու համար: Այսպիսով խնդիրը յետաձգուել է հետեեալ երեսփֹֿխանական ժողովին:

Դեկտեմբերի 18-ին գումարուած ազգ. երեսփֹֿխանական ժողովը զբաղուել է դարձեալ պատրիարքի հրաժարականի խնդրով. վարչութեան կողմից բացատրութիւն է տուել Խոսրովեան էֆէնտին, թեր ու դէմ բռն վիճաբանութիւնից յետոյ ժողովը յանգել է հետեեալ բանաձևին.

«Ազգային ժողովը Արքայան պատրիարքին հրաժարականին առթիւ Ազգ. վարչութեան բացատրութիւնները լսելէ վերջ, պահանջումներուն կատարեալ գոհացում մը ձեռք բերելու մասին վարչութեան ջանքերուն իւր վրտահութիւնը կրկնելով՝ անոր շրջահայեցութեան և խոհեմութեանը կը թողու նոր Դահլճին ցոյց տալիք (նոր նախարարական կազմ) տրամադրութեանց համեմատ Արքայան պատրիարքին հրաժարականին լուծում տալ»:

Ուրեմն դարձեալ առկախ մնացած խնդիր:

Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ ծայրագոյն վարդապետը անցեալ դեկտեմբերի 8-ին մեկնելով Կ. Պօլսից 17-ին հասել է Երուսաղէմ, որտեղից հեռագրում է Կ. Պօլսոյ պատրիարքարանին, որ հինգշաբթի օրը (դեկտմ. 17-ին) Երուսաղէմ է ժամանել, տեղական կառավարութեան կողմից շատ լաւ ընդունելութիւն է գտել: Վանքի միաբանութիւնը չի կամենում ընդունել իւր պաշտօնը և նրանցից վատ ընդունելութեան է արժանացել: Տ. Յարութիւն Արքայան Պատրիարքը բոլորովին զառամեալ վիճակի մէջ է գտնուում: Տեղական կառավարութիւնը խոստացել է պաշտօնի կիւարութեան համար պէտք եղած աջակցութիւն ցոյց տալ: Իսկ Կ. Պօլսից հեռագրում են «Bary լրագրին»:

«Հայոց պատրիարքը երուսաղէմ ուղարկած երեք անձից բաղկացած յանձնաժողովը, որ պէտք է կարգի գնէր վանքի միաբանների մէջ ծագած թիւրիմացութիւնները, վանականների կողմից թշնամական վերաբերմունքի է հանդիպել. թոյլ չեն տուել վանք մտնել: Հարց է եղել իշխանութեան միջամտութեան դիմել:

Այսպէս երուսաղէմի խնդրին, Տեղապահի կարգուելովը, ոչ միայն վերջ չը տրուեց, այլ նոր շրջանի սկիզբն է դրում: Բարեբաղդաբար Կիլիկիայի Սրբազան Կաթողիկոսը յետ է վերցրել իւր հրաժարականը հաւատալով Ադանայի Վալի Ձէմալ բէյի բարեացակամ հաւաստիացումներին: Կիլիկիոյ Սահակ Սրբազան Կաթողիկոսի Ադանայում եղած ժամանակ Վալի Ձէմալ բէյը այցելել է նորին Սրբութեանը Հայոց առաջնորդարանում. խօսակցութեան նիւթն եղել է Կիլիկիայի հայերի կոտորածը, որի հետեանքով հրաժարական տուին Սոյ կաթողիկոսն ու Կ. Պօլսոյ Հայ պատրիարքը: «Բիւզանդիոնը» «Սթամպուլ» լրագրից առնելով գրում է.

Զրոյցի մը համեմատ, որ հետզհետէ կստուգուի, կառավարութիւնը 15,000 ոսկիի դումար մը պիտի յատկացնէ Զարդերուն միջոցին այլած եկեղեցիներն ու դպրոցները վերաշինելու համար: Արդարեւ հայոց եկեղեցին սկսաւ փլցուիլ: Եկեղեցիին դեմնէն մաս մը փողոցին պիտի միացուի, զայն լայնցնելու համար թաղապետութեան յատակագծին համաձայն:

Կիլիկիայի հայերի դրութիւնը շատ ցաւալի է. կոտորածից յետոյ տեղի ունեցաւ հեղեղ և Կ. Պօլսոյ կենտրոնական վարչութիւնը բացառաբար զբաղուած է Կիլիկիայի հայերի դրութիւնը բարւոքելով և որբերին պատսպարելով:

Մեր պատրիարքարանի կողմից մի պատուիրակութիւն է նեկայացել յունաց Սրբազան պատրիարքին յայտնելով, որ Հայոց Պատրիարքարանը ըստ ամենայնի համամիտ է քրիստոնեայ զինուորների վերաբերութեամբ յոյն Պատրիարքարանի արած և անելիք առաջարկութիւններին, իսկ

այդ առաջարկութիւնները յայտնի են արդէն Արարատի ընթերցողներին, այն է, որ քրիստոնեայ զինուորները զինուորական պարտք կատարելու համար իրանց բնագաւառներում ծառայեն, բանակի մէջ առանձին վաշտեր կազմեն, տնեան աղօթատուն և քահանայ, ազատ լինեն իրանց կրօնական պարտաւորութիւնները կատարել, քրիստոնեաները իրանց կրթութեան և ծառայութեան համեմատ ստանան սպայական աստիճան և այլն։ Հրէից բաբունապետն ևս հրէայ զինուորների համար էր առաջարկութիւններ արել։

Թուրքաց կառավարութիւնը անհնար է գտել այդ առաջարկութիւններին բաւարարութիւն տալը։

Ինչպէս երևում է քրիստոնեաները ընդհանրապէս և ի մասնաւորի հայերը, որ այնքան ոգևորւած էին ցոյց տալիս իրանց զինուորութեան խնդրում, այժմ՝ շատ էլ յօժարամիտ չեն զինուոր գնալու, և խուսափում են փախչելով այլ և այլ երկրներ ու հեռաւոր Ամիրիկա։ Այդ կրկին չարիք է։

Զինուորութիւնը քաղաքացիական մի գեղեցիկ պարտականութիւն է դէպի իւր հայրենիքը, և մի և նոյն ժամանակ կարգապահութեան, անձնական արժանապատուութիւնը յարգելու մի լաւ միջոց։ «Բիւզանդիոնի» դեկտեմբերի 24—թերթում կայ մի գեղեցիկ յօդուած զինուորութիւնից խուսափելու առիթով, ուր ի միջի այլոց ասուած է.

«Նւ այս եղած էր արդարեւ հայուն դերը. փախչել, միշտ փախչել... փախչել կռիւէն, փախչել կոտորածէն, փախչել պարտականութենէն և ամենէն վերջն ալ փախչել, ահա, զինուորագրութենէն...»։

Նւ ճշմարիտ. ինչո՞ւ են խուսափում զինուորագրութիւնից։ 1886 թուից Կովկասում զինուորագրութիւնը բոլոր քրիստոնեաների համար պարտաւորական դարձաւ։ 24 տարի է անցել այդ օրից, առաջին տարիները, երբ դեռ նորութիւն էր զինուորագրութիւնը, հասկանալի էր ժողովրդի ոչ յօժարակամ վերաբերմունքը, բայց 24 տա-

լուայ մէջ մեր ժողովուրդը տեսաւ և համոզուեց որ զինւորագրութիւնը բարիք է, վասն զի պատանիները գիւղական շրջանից դուրս գալով զարգանում են մտաւորապէս և ֆիզիքապէս, սովորում են տնտեսութեան, կարգապահութեան և իրանց մտքերը կանոնաւոր արտայայտելուն: Երկիւղն ու վեհերոտութիւնը որ մարդկային արատիքներէից ամենից նողկալին է, տեղի է տալիս, զօրանում է անձնապաշտպանութեան և պարտքի կատարման գիտակցութիւնը: Այս ամենը կայ, տեսել է և տեսնում է ժողովուրդը, բայց այնու ամենայնիւ մարդ զինւորագրութեան օրին, երբ տեսնում է պատանեակներին կամովին նիհարած, խեղանդամ եղած, որ ազատուն զինւորութիւնից, դառնութեամբ լցւում է: Միթէ արժէ առաւելն 3 տարի զինւորական պարտք կատարելու համար ցմահ խեղանդամ լինել և մնալ:

ԳԱՌԱՌԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ակնայ առաջնորդական փոխանորդը հեռագրում է պատրիարքարանին, որ թշուառութիւնը սոսկալի է, սովի վտանգ կայ, եթէ փութով օգնութիւն չը լինի, ծագելիք անպատեհութեան համար պատասխանատու չէ:

Զէյթունի կաթուղիկոսական տեղապահ Տ. Վաղարշակ Ժ. վարդապետը գուժելով տեղւոյն հիմա տիրող սովը 300 ոսկու անմիջական նպաստ է խնդրում:

Կ. Պօլսոյ նպաստից յանձնաժողովը որոշել է Զէյթուն 200 ոսկի ևս ուղարկել, իսկ Ակնայ համար գրել քաղաքական ժողովին, որ կառավարութիւնից նպաստ խնդրի Հայաստանի սովելոց համար, որովհետեւ նպաստից յանձնաժողովի միջոցները սպառուած են:

Եգիպտոսի Հայոց առաջնորդարանը պաշտօնապէս յայտարարում է, որ ազգայինները գաղարկն Եգիպտոս գաղթելու, որովհետեւ նրանք այնտեղ խեղճութեան են մատնուելու անօգ, անպատասպարան, այնտեղ ոչ առաջնորդարանի և ոչ Պօղոս փաշայ Նուբարի գիշերօթիկ վարժա-

րան կայ, ուստի և այդ կարծեցեալ վարժարանը մտնելու յուսով եկողները պատրանքի ու թշուառութեան են մատնուում և վերադարձի էլ ծախք չեն ունենում:

Մարտունում հայերի և յոյների մէջ գերեզմանատան մի խնդիր է ծագել: Յոյն պատրիարքարանի հարցմանը մեր պատրիարքարանը, ստոյգ տեղեկութիւն ստանալով պատասխանել է, որ բռնապետութեան ժամանակ յոյները հայերի գերեզմանատան մի մասը յափշտակել էին: Այժմ հայերը կամեցել են իրանցից իլուած մասնում ննջեցեալ թաղել: յոյները արգելեն են, բայց հայը մեծ թուով ներս մտնելով գերեզմանատուն, գրաւել են այն:

Կեսարայի առաջնորդ Տ. Տրդատ եպիսկոպոսի և տեղւոյն քաղաքական ժողովի չորս անդամների միջև տարաձայնութիւնը քննելու համար անցեալ նոյեմբերի 25-ին առաջնորդարանում 50 անձանց ներկայութեամբ ժողով է եղել: քննուել են առաջնորդի գէժ եղած ամբաստանութիւնները, որ չեն հաստատուել: Համաձայնութիւն է կալացել: Գոհունակութիւն է յայտնուել առաջնորդին նրա ազգօգուտ գործունէութեան համար և հեռագրուել է ազգային պատրիարքարանին:

ԳՊՐՈՅՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Բիզանդիոնում կարգում ենք.

Կրթական նախարարութիւնն այս օրերս շրջաբերական մ'ուղղեց ինչպէս հայոց, նոյնպէս Յունաց Պատրիարքարանն և Պուլկարաց Էկզարքարանը: Այս շրջաբերականին մէջ նախարարութենէն բացուած Բարձրագոյն վարժարանները, ուսուցանողներն և Իտատի վարժարաններն ամէն ազգի տղոց կրթութեան յատկացուած ըլլալով, միայն նախակրթարանները խառն կրթութեան յատկացեալ չեն, որովհետեւ կրօնական և լեզուական կրթութեան յատկացուած են:

«Այս տարիէն սկսեալ ամէն նահանգի ժողովրդեան ընդհանուր թիւին մէջ, այլ և այլ աղգերու համեմատական թիւն ինչ որ է, նոյն նահանգին նախակրթութեան յատկացեալ գումարը նոյն համեմատութեամբ պիտի բաժնուի և իւրաքանչիւր աղգի նախնական դպրոցներու համար որոշեալ գումարով Կրթական նախարարութիւնն առնոց համար վարժարան պիտի բանայ և կամ, եթէ պէտք չտեսնուի նոր վարժարան բանալու և կամ որոշեալ գումարը չբաւէ նոր վարժարան մը բանալու, վարժարանին մէջ գտնուած ուսուցիչներու կամ պաշտօնեաներու մէկ կամ մէկ քանիին ամուսականները պիտի վճարուի Կրթական նախարարութենէն»

«Անհատներու, ժողովուրդներու և օտարազգիներու կողմէ հաստատուած այլեւայլ աստիճանի մասնաւոր վարժարաններու աշակերտները, պետական պաշտօնական վարժարաններն ընդունելու համար, նախեառաջ պէտք է որ այդ վարժարանները Կրթական նախարարութենէն վաւերացեալ ըլլան և արձանագրուի միանգամայն, որ պետութեան նախնական (Ի պ թ ի տ ա ի), երկրորդական (Բ իւ շ տ ի) և (Ի տ ա տ ի) վարժարաններէն ո՞ր կարգին կհամապատասխանեն։ Այս կերպով արձանագրուած՝ մասնաւոր հանրային և օտար դպրոցներու քննութիւնները Կրթական նախարարութեան հսկողութեան ներքե տեղի պիտի ունենան և վկայականները նոյն աստիճանի պաշտօնական վարժարաններու վկայականին նման պիտի ընդունուին, այսինքն Հայ, Յոյն և Պուլկար նախնական (Ի պ թ ի տ ա ի) վարժարաններու վկայական ունեցողները պետական (Բ իւ շ տ ի, է) վարժարանները պիտի ընդունուին։ Այսպէս, երկրորդական վարժարաններէ վկայեալներն Ի տ ա տ ի վարժարանները և Ի տ ա տ ի վարժարաններու հաւասար դպրոցներէ վկայեալներն այլ պիտի կրնան մըտնել պետական Բարձրագոյն վարժարանները»

Ազգ. Պատրիարքարանը տակաւին խընդրոյ առարկայ չէ ըրած այս գիրը, որուն մէջ աղգային նախնական վարժարաններու պետութենէն բաժնուելու պարագաները լու-

սաքանութեան կկարօտին: Յունաց Պատրիարքարանն ալ
 Խառն Ժողովին յանձնած է այս խնդիրը. միայն թէ յոյն
 թերթերը կերպով մը Պատրիարքարանի առանձնաշնորհմանց
 միջամտութիւն կհամարեն այս խնդիրը, և յոյն Պատրիար-
 քարանը կը պահանջէ մանաւանդ, որ յոյն նախնական
 վարժարաններու յատկացեալ բաժինը փոխանակ ուղղա-
 կի Կրթական նախարարութենէն տրուելու վարժարանաց,
 Պատրիարքարանի և մետրապօլտարաններու միջոցաւ տրուի:
 Այդ ուղղակի տրուելու պարագան մտքերը կշիւթեցնէ
 քիչ մը Միւս կողմէ, թուրք թերթերը կըսեն թէ ոչ-խա-
 լամ վարժարանները դասակարգելու բաժնել հարկ եղած
 է, որովհետեւ զինուորագրութեան խնդիրներու մէջ, ան-
 վաւեր կամ աստիճանն անձանօթ վարժարանաց ուսուց-
 չական վկայականները չեն կրնար վաւերանալ, որպէս զի
 զինուորութենէ ազատ մնան: Նոյն թերթերը կըսեն, թէ
 որոշեալ գումարներու ուղղակի Կրթական նախարարու-
 թենէն տրուին ալ միջամտութիւն չէ, այլ դիւրութեան
 համար է: Աւէն Պատրիարքարան պիտի պահանջէ, որ
 ըստ ի մթիյն ազատ իր ունեցած վերին հսկողութիւնը
 վարժարանաց վրայ, ճանչցուի պետութենէն և ազգային
 նախնական դպրոցները մասնաւոր կամ օտար դպրոցնե-
 րու հանգամանքը չունին, ինչպէս կփորձուէր բռնապետա-
 կան շրջանին մէջ: Ազգ. Պատրիարքարանը բնականաբար
 այս շրջաբերականն ուշադրութեան առարկայ պիտի ընէ:
 Մասնաւորապէս կյիշենք, որ իբր երկու ամիս առաջ ճա-
 րիկեան էֆ. Ազգ. Ժողովոյ մէջ յանուն վարչութեան յայ-
 տարարեց, թէ Կրթական նախարարութեան հետ համա-
 ձայնութիւն մը գոյացած է Ազգ. վարժանանաց համար և
 մի առ մի մէջ բերաւ մանրամասնութիւններն, որոնք շատ
 չեն համաձայնիր այս շրջաբերականին մէջ յիշուածներուն:
 Որքան կյիշենք, անոնք աւելի ընդարձակ պայմաններ
 կպարունակէին, հետեւաբար արդի վարչութիւնն անտա-
 րակոյս իր նախորդէն պիտի իմանայ այս մասին գոյացած
 համաձայնութիւնն, որ պաշտօնապէս ալ յայտարարուեցաւ
 Ազգ. Ժողովոյ մէջ:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԷՊԻ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՁ

Հալէպի ժրաջան առաջնորդը, որ վերջին Կիլիկեան աղէտներուն մէջ գնահատելի դործունէութիւն մը ունեցաւ և իր նախորդին ձգած տխուր յիշատակը մոռցուց, վերջին անգամ իր վիճակին մէջ թեմական այցելութեան ելլելով, ընդարձակ տեղեկագիր մը ղրկած է Պատրիարքարան, նկարագրելով իր տպաւորութիւնները, մանաւանդ նորագոյն տեղեկութիւններն արկածեալ վայրերու նկատմամբ: Հալէպի նահանգին մէջ պատահած աղէտը շատ մեղմ է Ադանայի մէջ պատահածէն, ոակայն տեղեր կան, որոնք բոլորովին փճացած են և հազիւ հետքեր միայն կտեսնուին: Տ. Շահէ Յ. Վ. կսէ, թէ առաջին անգամ հանդիպեցայ Գըրըգ խան, որ 90—100 տունէ բաղկացեալ զուտ հայաբնակ գիւղ մէ և բացարձակապէս չբացած է և եթէ չըլային, կըսէ, ճամբորդներու յատկացեալ պանդոկներէն ոմանք, դժուար պիտի ըլլար հաւատալ, թէ երբեմն այնքան չէն ու զուարթ գաղութ մը ապրած էր հոն: Կոտորածէն աղատուած ու Պէյլան հաստատուած գիւղացիներ ցոյց տուեր են այն տեղերն, ուր հայերը ապաստանած էին ու ջարդուեցան, և ուր վայրենաբար այրած էին խեղճ հայերը: Կառավարութիւնը այրած տունները շինելու համար խոստացած գումարն երեք անգամէն վճարելու կարգադրութիւն ըրած ըլլալով, առաջին մասը վճարել է և սլտերը բարձրանալով շէնքերուն վրան չժածկուած, հեղեղներ քանդեր են շինուած մասը: Եթէ ժամանակին ամբողջական վճարում ըլլար, շինութիւնն աւելի լաւ կերպով գլուխ կելէր:

Պէյլան ագէն կարօտ տեղ մը, կըսէ, Գըրըգխանցիներու որբերն ու այրիներն ալ գալով թշուառութիւնն աւելի սաստկացեր է: Պէյլանի գայմագամը շատ ազնիւ անձ մէ, կրցած էր արգիլել հոն ջարդն ու թալանը, աղէտեալներուն օգնած էր, ցոյց տուած էր միանգամայն Գըրըգ խանի գէպըին կաղմակերպիչները, Գարամուրսալ զատէ Մուսթաֆա փաշա և Պէյլանի նախորդ միւլիթի Օսման Նուրին, զորս, կ'յուսացուի, որ նոյն գայմագամին ջանքե-

րով կարելի պիտի ըլլայ հեռացնել իրենց տեղերէն: Իսկէն-
տէրունէն, կըսէ Շահէ Ծ. Վարդ., վաճառական թէ արհես-
տաւոր մեկնած են դէպի Եգիպտոս, Վիպրոս կամ Ամե-
րիկա. դպրոցը փակուեր է, սակայն առաջնորդը յաջողեր
է բանալ՝ սեռուցիչ մը և ուսուցչուհի մը հրաւիրելով:
Տեօթեօթէն ու Իսկէնտէրունի չըջակայ Հայ գիւղերէն ե-
կաղներուն կառավարութիւնը նպաստ կուտայ, սակայն
հազիւ օրապահիկի կբաւէ և իրենք կընակին խոնաւ և
խեղճ տուներու մէջ: Տ. Շահէ Ծ. Վարդ. Իսկէնտէրունի
մէջ տեսակցեր է կուսակալ Ֆախրի փաշայի հետ, նկարա-
գրելով իր տեսածները, սրոնց վրայ սեշադութիւն հրա-
ւիրեր է և յաջողեր է նպաստաբաշխ մարմնոյն վերայ
երկու Հայ անդամ աւելցնել: Առաջնորդը մեծ գովեստով
կիսօտի Իսկէնտէրունի մէջ իբր միսիօնար գոծող Մր. Քէ-
նէտիի և կնոջ մասին, որ շատ մեծ օգնութիւններ ըրած
են ու կառավարկէ որ շնորհակալութեան գիր մը զրկուի
իրենց: Իսկէնտէրունի անգլ. հիւպատոս Մր. Գասթօնի,
անգլ. կառավարութենէն ստացած է արձաթեայ կազա-
մար մը «կիլիկեան դէպքերուն միջոցին Բրիտանական
կառավարութեան պատիւ բերող ընթացքին համար» վեր-
տառութեամբ:

Շահէ Ծ. Վարդ. Իսկէնտէրունէ անցեր է Անտիօք,
ուր մեծ թշուառութիւն կըտիրէ և 48 հոգիէ զատ 16
տարեկանէն վեր եղող բոլոր այրերը ջարդուած են: Տու-
ներ կողոպտուած, կիներ ու որբեր մէջտեղ մնացած են:
Քիչեր առանձին տուներու մէջ կընակին, մնացեալները
խռնուած են քաղաքապետութենէն վարձուած շենքերու
մէջ: Այրիներու թիւն է 70, որբերու թիւը 163, 25 որբեր
և 33 որբուհիներ տարուած են զանազան որբանոցներ,
իսկ մնացեալք կգտնուին իրենց մայրերուն հետ: Կառավա-
րութիւնը 500 անձի նպաստ կուտայ մեծերուն 6 և փոք-
րերուն 4 մէթալիք օրական: Կատարեալ մուրացիկներ են
ամեքն ալ և օրական հացին հազիւ կբաւէ տրուած կա-
ռավարական նպաստը: Առաջնորդն առաջարկեր է Հալէպի
կուսակալին որ փոխանակ այսպէս օրական նպաստներու՝

մէկ անգամէն 1000 ոսկի տրուի, որպէսզի 300-ը իբրեւ գրամագլուխ ծառայէ, իսկ մնացեալը յատկացուի իբրեւ գրամագլուխ գորգագործարանի մը, և այրիներն և որբերն իրենց ապրուստը չահին: Կուսական այս առաջարկը գնահատելով հեռագրեր է ներքին գործոց նախարարին և առաջնորդը կիսնդրէ որ մզում տրուի այս գործին:

Անտիոքի եկեղեցին թալլուած և քանդուած ու կառուածները յափշտակուած ըլլալով, առաջնորդը դիմեր է տեղական կառավարութեան և յաջողեր է շինել տալ քանդուած ժամերը: Անտիոքի բանտին մէջ 250 թուրքեր կան եղեր 15 էն մինչև 1 տարի բանտարկութեան դատապարտուած: Առաջնորդն այցելեր է նաև 300 տուն զուտ Հայ բնակչութիւն ունեցող գիւղ մը, ուր ժողովուրդը շերամաբոյծ ըլլալով, շերամի եղանակէն յետոյ 65 ջուլհակի տէսթկահներով զանազան կերպաններ կապտառուտեն, բայց հաստատ մնացած են իրենց ազգութեան և հաւատքին վրայ: Պիթիաս գիւղն ալ գացեր է Շահէ վարդ, ուր 200 տուն բնակիչ կայ 90 տուն Հայ—բողոքականներով: Հայերը բան մը չունին կըսէ, որովհետև դեպքերէն յետոյ վարժապետը մեկնած, իսկ քահանան ալ խելագար վիճակի մէջ է: Այս խելագարը Պոլիս զրկեր է, և վարժապետ մը գտեր է և ի մօտոյ քահանայ մը պիտի կարգէ հոն:

Ուզուն Օլութ ալ գացեր է, ուր 240 տուն Հայ, 40 տուն Հայ—բողոքական և 20 տունի չափ ալ հայ լատին կան: Այստեղ, կըսէ, ժողովուրդը սանտր շինելով կապրի և տարին մէկ միլիոն սանտր կը զրկէ Եգիպտոս, Հալէպ, Համա, Պէրութ և Դամասկոս: Այցելեր է նաև Խըտըր պէյ, իսկ Քէսապ ևն. չէ կրցեր երթալ տեղատարափ անձրեխն պատճառաւ:

Անտիոքի առաջնորդութիւնը, կըսէ Շահէ վ., իր շրջակայ գիւղերով 2500—3000 տունէ կըադկանայ, 40—50 տարիէ իվեր լքուած է, սակայն Մուսա լերան այս գիւղերը պահած են իրենց եկեղեցին, ու լատին և բողոքական միսիօնարութեան ոպառած ոսկիները չեն ազգած զանոնք հեռացնելու իրենց եկեղեցիէն: Ուստի կառա-

ջարկէ որ կարող եկեղեցական մը զըրկուի հոն իբրեւ տեղապահ, Թեմականները Փառէն Վ.ն առաջնորդ ընտրած են և այս ընտրութիւնն հեռագրուած է իրեն, սակայն ինք որքանօցներու գործով զբաղեալ, չէ կրցած պատասխան մը տալ:

Տ. Շահէ Վարդ, ի վերջոյ կառավարկէ Պատրիարքարան 1. Լուրջ ուշադրութիւն դարձնել Անտիոքի, Քէսապի և ուրիշ արկածեալ գիւղերու ժողովրդեան համար, կառավարական նպաստը մէկ անգամէն բաշխել տալ և Անտիոքի մէջ կանանց գորգանոց մը բանալու ձեռնարկել, իսկ այրերուն՝ նոյն նպաստէն իբր դրամագլուխ՝ 3-5-7 ոսկի բաշխել տալ: 2. Ս. Կաթողիկոսին հաւանութեամբ տեղապահ մը կամ հոգեւոր հովիւ մը զրկել Անտիոք: Արմաշի վերջին վարդապետներէն Տ. Սուրէն Վրդ. կրնայ գոհացնել, կըսէ: 3. Առանց գիրքի մնացած այս թեմին գրեհական պէտքերը ժամանակին հայթայթել: Առաջնորդին այս տեղեկագիրը, որ կատարեալ աշխատութիւն մէ, պէտք է լուրջ ուշադրութեան առարկայ ըլլայ վարչութեան կողմէ և հարկ եղած ձեռնարկներն ըլլան ատենին, որպէսզի որ առաջ դարձան մը հայթայթուի: Վերջին օրերս կլսուի որ կառավարութեան յատկացուցած 20,000 ոսկին սպառած և նպաստի բաշխումը դադարած է: Ձմեռը դեռ նոր կսկսի և թշուառութիւնը կտիրէ, Ի՞նչ պիտի ըլլան իրենց այրերն սպաննուած, տուները կողոպտած այրիներ և 1-5 տարեկան սրբերն ու որբուհիներ: Պատրիարքարանը պէտք չէ այս կէտը վրիպեցնէ ուշադրութենէ: Խօսք կայ որ կառավարութիւնը նոր վարկ մը պիտի ուզէ Խորհրդարանէն Հալէպի համար, սակայն դիմումն անհրաժեշտ է:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հայ կաթոլիկ պատրիարք-կաթողիկոսի ընտրութեան պայքարը դեռ շարունակուած է Կ. Պօլսում: Վենետիկեան երեք վտրդապետներ ամբաստանուած համարելով իրանց՝ բաւարարութիւն են պահանջում հայ կաթոլիկ

պատրիարքարանից: Պատրիարքարանը ի դէմս տեղապահ Գոյիւնեան եպիսկոպոսի բերանացի հաւաստիացումներ է տալիս, թէ ամբաստանութիւն չէ եղել: Վարդապետերը պահանջում են գրաւոր հերքում, իսկ այդ հերքումն զլացւում է: Այդ երեք վարդապետները, ազգ. երեսփոխանական ժողովի անդամ էլ են: Ամբաստանութեան կէտերն են

1, որ առանձինն՝ ինչպէս նաև ժողովների մէջ պատրիարքարանի խնդիրներին միջամուխ են լինում. 2, որ տեղապահի անձին հակառակ են խօսում. 3, որ ժողովրդի հոգին յուզում են և 4, որ եկեղեցական իշխանութեան հակառակում են:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻ

ՊՐԱՆՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՅԻ

Церк. вѣст.

Ա. Պ. Բուրդի հոգիւ. Ճեմարանի 400 ամեակը: Հոգեւոր Ճեմարանի նոր կանոնադրութիւն: Պրաւօսլաւ եկեղեցուց անջատուածներ:

Պրաւօսլաւ եկեղեցական կեանքում նշանաւոր դէպք Ս. Պետրբուրգի հոգեւոր Ճեմարանի հարիւրամեակի յօրելեանն է, որ տօնուեց անցեալ դեկտեմբերի 17-ին:

Հոգեւոր Ճեմարանը իւր հարիւրամեայ գործունէութեան մէջ տուել է բազմաթիւ բարձրաստիճան հոգեւորականներ, քահանաներ, գիտնականներ, հասարակական գործիչներ: Церковный вѣстникъ շաբաթաթերթի 50-51 համարի առաջնորդողները, որ նուիրուած են Ճեմարանի հարիւրամեակին, թուելով Ճեմարանի մատուցած ծառայութիւնները եկեղեցուն և ընծայած նշանաւոր սաների անունները, — վերջանում են հետեւեալ բառերով.

«Նւ ահա, անցեալ դարի այսպիսի պատմական ժառանգութեամբ, այսպիսի գործիչներով անցեալում և ներկայումս մեր Ճեմարանը այժմ տօնում է իւր գործունէութեան առաջին հարիւրամեակը. փառք և պարծանք նրան»: